ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ « ՈՒսուցչի կողմից տարրական դասարանների աշակերտների ուսուցման ու դասիրակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափանիշներին համապատասխան »

ԱՌԱՐԿԱ՝ Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա

ՀԵՂԻՆԱԿ՝ Մերի Գասպարյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Շաղաթի միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննիսյան

ՍԻՍԻԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…… 3

ՈՒսուցչի կողմից տարրական դասարանների աշակերտների ուսուցման ու դաստիարակության պլանավորումը հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան

Կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը (1-4-րդ դասարան)…… … 6

Կրտսեր դպրոցականների անհատական առանձնահատկությունները…… 10

Եզրակացություն…… 19

Օգտագործված գրականության ցանկ…… 20

Ներածություն

Տարրական կրթությունը հանրակրթության հիմքն է: Այս փուլում ուսուցման առանձնահատկությունները պայմանավորված են մի կողմից՝ սովորողների տարիքային առանձնահատկություններով, մյուս կողմից՝ կրթական համակարգի սկզբնական փուլի պայմաններով: Այս փուլում տեղի է ունենում ուսումնական հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների դրդապատճառների ձևավորումը, ինքնագիտակցության զարգացումը:

Ուսուցման ու դաստիարակության կարևորագույն առանձնահատկությունն անձի համակողմանի զարգացման նրա ուղղվածությունն է: Դա ամենալայն հնարավորություններն է բացում անձի ակտիվ, ստեղծագործական գործունեության, նրա բոլոր ընդունակությունների ձևավորման համար:

Ուսուցման ու դաստիարակության արդյունավետության բարձրացմանը կարելի է հասնել նրա նկատմամբ համալիրային մոտեցման հիման վրա, գաղափարաքաղաքական, աշխատանքային ու բարոյական դաստիարակության սերտ ապահովման միջոցով:

Աշակերտների ուսուցումն ու դաստիարակությունը կարելի է համարել արդյունավետ, եթե համատեղ կազմակերպվում են ուսուցիչների և աշակերտների գործունեության եղանակները՝ ուղղված ուսուցման խնդիրների բազմակողմանի լուծման:

Դասի ուղիղ կապը ենթադրում է ուսուցչի գիտական հարուստ ինֆորմացիայի հաղորդումը աշակերտներին, այսինքն մասնագիտական խոր պատրաստվածության հիման վրա կարողանում է ղեկավարել աշակերտների ուսումնաճանաչողական ու պրակտիկ գործունեությունը, կիրառում բազմազան մեթոդներ, հնարներ, միջոցներ, ապահովում սովորողների ակտիվությունը դասին:

Ուսուցիչն իր ամենօրյա գործունեության պլանավորումը իրականացնում է օրացույցային, թեմատիկ և դասերի պլաններ կազմելու միջոցով: վերջինիս մեջ բովանդակում է դասի կազմակերպչական մաս, դասի նպատակի հստակ առաջադրում, նոր նյութի մատչելի ու գիտակցական շարադրում, նյութի կրկնությունն ու ամրապնդունը աշակերտների ակտիվ մասնակցությամբ, յուրացման ստուգումը հարցման միջոցով ու դասի ամփոփում, տնային աշխատանքի հանձմարարում:

Ուսուցիչը պետք է հստակ պատկերացնի, թե ուսուցման ինչ խնդիր է դնում իր առաջ, թե որն է դասի նպատակը, գիտական գիտելիքների ինչ պաշար պետք է հաջորդի, կամ ինչ թեմաներ, ինչ ծավալով ու խորությամբ պիտի կրկնի ու ամրապնդի այն: Չնայած այս ամենը կենսագործելիս պետք է ելնի ուսումնական ծրագրերի և դասագրքերի, թենային առնչվող անհրաժեշտ աղբյուրների ընձեռնած հնարավորություններից: Հենց այս ելակետային դրույթից ելնելով էլ ուսուցիչը պետք է ընտրի դասի տիպը, նրա անցկացման միջոցները, ապահովի աղիղ կապը: Անհրաժեշտ է նաև, որ ուսուցիչը գործիմացությամբ ժամանակին որոշի դասի կահավորման

հիմնահարցերը, զննական ինչ պարագաներ, առարկաներ, դիտանյութեր, տեխնիկական միջոցներ կարելի է և պետք է օգտագործել:

Չափազանց կարևոր է նաև դասին ապահովել հետադարձ կապը: Այդ նշանակում է՝ աշակերտների կողմից շարադրանքի գիտակցական յուրացումն ու ընկալումը և ամբողջապես գիտակցել, թե ինչ են ուսումնասիրում, ինչի համար են ուսումնասիրում, ինչ են ըմբռնել, ինչը՝ ոչ: Արդյոք յուրացրած գիտելիքները իմաստավորել, ընդհանրացրել, վերածվել են համոզմունքների՞, թե ոչ: Ուրեմն՝ ամիրաժեշտ է դասին ապահովել արտաքին և ներքին հետադարձ կապը: Դրանք են՝

ա. ուսուցչի կողմից վերահսկել նրանց կաղմից ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների արդյունքները, որն ապահովում է արտաքին հետադարձ կապը.

բ. ինքնավերահսկողությունն ապահովում է ներքին հետադարձ կապը: Աշակերտներն ինքնավերահսկողության միջոցով կարողանում են գաղափար կազմել իրենց ուսումնական գործունեության արդյունքների մասին, ավելի կոնկրետ, թե որքանով են կարողացել ձեռք բերել գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ: Եթե արտաքին կապը ծռայում է սովորողների ուսումնաճանաչողական գործունեության ղեկավարմանն ու կառավարմանը, ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպմանը ուսուցչի կողմից, ապա ներքին կապը ծառայում է այն բանին, թե սովորողները ինչպես և որքանով ճիշտ են կառավարում իրենց ուսումնաճանաչողական գործունեությունը, կատարելագործում գիտելիքները, հմտություններն ու կարողությունները:

Եթե ուսուցիչը վերահսկողության միջոցով իմանում է, թե սովորողները որքանով խորն են ըմբռնել, հասկացել, իմաստավորել, ամրապնդել գիտելիքները, ապա սովորողներն էլ ինքնավերահսկողության միջոցով գաղափար են կազմում նույն որակների մասին: Այմուհետև ուսուցիչը որոնում է, մշակում համապատասխան ուղղիներ, միջոցներ՝ թերությունները վերացնելու, կատարելագործելու համար:

Ավելի արդյունավետ կլինի արտաքին և ներքին հետադարձ կապի ապահովումը դասին, եթե ուսուցիչը խելամտորեն կիրառի համագործակցության սկզբունքը, այսինքն՝ ուսուցիչը պետք է հրաժարվի հրամայողական մեթոդից և դաստիարակության ուսուցման գործընթացում հաշվի առնի նաև երխաների կարծիքը, ցանկությունները, պահանջմունքները, հետաքրքրությունները:

Ըստ <<Հանրակրթության պետական չափորոշչի>> տարրական կրթության հիմնական նպատակներն են. տարրական դպրոցի սովորողի.

1. Մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը,
2. Լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության, աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումը,
3. Աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը,
4. Բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը,
5. Բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը,

6. Միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթահամակարդակի ապահովումը: Այստեղից հետևություն ենք անում, որ տարրական դասարանի շրջանավարտը պետք է կարողանա.

հայերենով հաղորդակցվել մեծահասակների, հասակակիցների և փոքրերի հետ, ընկալել ուրիշների խոսքը և արտահայտել սեփական մտքեր,

- կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր, գրավոր շարադրել պարզ տեքստեր,
- տրամաբանական եզրակացություններ անել պատճառահետևանքային կապերի վերաբերյալ,
- սովորել և սովորեցնել, տիրապետել սովորելու հիմնական հմտություններին, ինքնակազմակերպվել և ինքնուրույն գործունեություն ծավալել, ճիշտ գնահատել իր հնարավորությունները,
- կարողանալ աշխատել համագործակցված, լինել թիմի անդամ, լինել նախախաձեռնող,
- գիտակցել և արժևորել իր ազգային ինքնությունը, հարգել և ընդունել ընտանեկան ու հասարակական կյանքի արժեքները,
- իմանալ իր իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատու լինել իր արարքների համար,
- ցուցաբերել հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ, հանդուրժողականություն և զուսպ վարք.
- ունենալ համարժեք ինքնագնահատական:

Ուստի, խիստ կարևորում ենք աշակերտի սովորել սովորելու և հաղորդակցական կարողությունները:

ՈՒսուցչի կողմից սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան

Կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը (1-4 դասարան)

Կրտսեր դպրոցական տարիքը (6-ից 9-10 տարեկան) անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամածինության ձևավորումը՝ պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում:

Ընդունվելով դպրոց՝ երեխան նոր դիրք է զբաղեցնում հասարակության մեջ, նրան առաջադրվում են պարտականություններ, կապված ուսումնական գործունեության հետ: Հարազատները, ծնողները,ուսուցիչները, և անգամ օտարները երեխայի հետ շփվում են ոչ միայն որպես յուրահատուկ մարդ, այլ նաև որպես մարդու, որը իր վրա է վերցրել,ինչպես և իր տարիքի բոլոր երեխաները, սովորելու պարտավորությունը(անկախ նրանից, ստիպված է անում, թե իր ցանկությամբ):

Ուսումնական գործունեությունը պահանջում է երեխայից խոսքի, ուշադրության, հիշողության, երևակայության և մտածողության զարգացման նոր ձեռքբերումներ, ստեղծում է նոր պայմաններ երեխայի անձնավորության զարգացման համար:

Խոսքային և հուզական շփում: Դպրոցը երեխայի առջև դնում է խոսքի զարգացման նոր պահանջներ՝ դասի ժամին պատասխանը պետք է լինի հակիրճ, հստակ իմաստով, արտահայտիչ, հաղորդակցման ժամանակ խոսքի կառուցվածքը պետք է համապատասխանի մշակույթում ձևավորված նորմերին: Միայն դպրոցում երեխան առանց ծնողի հուշումների (օրինակ՝ «Ասա շնորհակալություն», «կարելի՞ է Ձեզ հարց ուղղել» և այլն), այս կամ այն իրավիճակում ստիպված է ինքնուրույն կարողանա կառուցել իր խոսքը այնպես, որպեսզի կարողանա հաղորդակցման մեջ մտնել ուսուցիչների և հասակակիցների հետ:

Խոսքային կուլտորայի էությունը կայանում է ոչ միայն նրանում, որ երեխան ճիշտ և տեղին կարողանա արտասանել շնորհակալական խոսքեր: Այսպիսի երեխայի նկատմամբ հասակակիցները կարող են ունենալ գերազանցության զգացում: Միայն հաղորդակցման արդյունավետ միջոցների սովորեցմամբ և օգտագործմամբ է պայմանավորված շրջապատող մարդկանց վերաբերմունքը երեխայի նկատմամբ:

Միայն սեփական գործունեության արդյունքում է երեխան իր համար բացահայտում հաղորդակցման ձևերի հնարավոր բոլոր տարբերակները:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3 դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր Ես-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրության պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է ուսուցչի դերը:

Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային են նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր են խաղում իդեալների ձևավորումը, որոնք կրում են շատ հստակ բնույթ /հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով:

Ճանաչողական ոլորտի զարգացումը: Ուսումնական գործունեության ընթացքում որակապես փոխվում են իմացական բոլոր ոլորտները: Այս վերակառուցումը սկսվում է ինտելեկտուալ ոլորտի զարգացմամբ: Մտածողությունը ակնառու-գործունից անցում է կատարում բառատրամաբանականի: Ըստ Լ.Ս. Վիգոտսկու կողմից առաջադրած հիմնադրույթների՝ հոգեբանական գործառույթները զարգացում են օրինաչափորեն, այս տարիքում հիմնական գործառույթ է համարվում մտածողությունը, ինչն արտահայտվում է այլ հոգեկան ոլորտների վրա, որոնք դառնում են գիտակցված և կամածին: Ի տարբերություն նախադպրոցականի, խնդիրներ լուծելու ընթացքում կրտսեր դպրոցականը հաշվի է առնում երևույթների այնպիսի

հատկությունները, որոնք արտացոլում և հիմնվում են կոնկրետ գիտական հասկացությունների վրա: Սակայն այդ հասկացությունների ընկալման մակարդակը էականորեն կախված է ուսումնական գործունեության կազմակերպման ձևից:

Ինտելեկտուալ ռեֆլեկսիան (սեփական գործողությունների և հիմանվորումների ընկալման կարողություն) այն նորագոյացությունն է, որը տեսական մտածողության պարզագույն դրսևորումն է համարվում: Տեսական մտածողությունը ի հայտ է գալիս այնպիսի իրադրություններում, որոնք պահանջում են ոչ միայն կանոնների կիրառում, այլև նրանց ձևավորում և կառուցում:

Ուսումնական և դաստիարակության գործունեության ընթացքում ձևափոխվում են նաև մնացած հոգեկան ոլորտները՝ ուշադրությունը, ընկալումը, հիշողությունը: Առաջինային է համարվում այս հոգեկան գործընթացների կամածնության ձևավորումը, ինչը կարող է տեղի ունենալ կամ տարերայնորեն (ուսումնական գործունեության պայմանների ստերիոտիպային հարմարեցում), կամ էլ նպատակային (կառավարման հատուկ գործողությունների ներքնայնացում):

Առաջին օրվանից սկսած ուսումնական գործունեության ընթացքում դրվում են չափազանց մեծ պահանջներ ուշադրության վրա, հատկապես կամածնության տեսանկյունից: Երեխան ուսուցչի հրահանգով պետք է ուշադրությունը կենտրոնացնի և պահպանի այնպիսի առարկաների վրա, որոնք գրավիչ չեն վերջինիս համար: Հիշողությունը դառնում է գիտակցված, եթե հիմնվում է նյութի տրամաբանական մշակման միջոցների վրա: Կարևոր է երեխային հասկացնել մտապահված նյութի հետ ակտիվ աշխատանքի կարևորությունը: Անհրաժեշտ է երեխային սովորեցնել առանձնացնել մնեմիկ խնդիրը և զինել նրան մտապահման միջոցներով: Որոնցից են.

- Կանխամտածված սովորեցում
- Նյութի ակտիվ մտավոր վերամշակման միջոցներ
- Նյութի մեջ իմաստային հատվածների, նրանց նշանակության առանձնացում, պլանի մշակում
- Կրկնակի ընթերցանություն մտավոր վերամշակման համար և այլն:

«Զարգացնող կրթության» կողմնակիցները քննադատում են ավանդական համակարգը նրա համար, որ այն նպաստում է, այպես կոչված, «դպրոցական հիշողության» ձևավորմանը, ինչի հիմքում ընկած է մեխանիկական մտապահումը:

Անձնավորության ձևավորում: Անձնավորության ձևավորումը, ինչը կապված է մոտիվների և ինքնագիտակցության հետ, շարունակում է իր զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում: Սակայն կրտսեր դպրոցականը, ի տարբերություն նախադպրոցականի, իր գործունեության մեջ է ներառում նաև ուսումը, որի արդյունքները գնահատվում են մեծահասակների կողմից: Դպրոցական առաջադիմությունից, երեխայի լավ կամ վատ սովորելու արդյունքում ստացած գնահատականից է կախված նրա անձնավորության զարգացումը: Մոտիվացիոն ոլորտը, ինչպես կարծում է Ա.Ն. Լեոնտևը, անձնավորության միջուկն է: Ի՞նչն է երեխային առաջ մղում, որո՞նք են նրա ցանկությունները: Երեխայի ուսման սկզբում, ունենալով աշակերտի ներքին դիրքորոշում, նա ցանկանում է սովորել: Նույնիսկ լավ սովորել, գերազանց: Ուսուցման

սոցիալական մոտիվներից, երևի թե, ամենագլխավորը բարձր գնահատականներ ստանալն է: Բարձր գնահատականը կրտսեր դպրոցականի համար այլ խրախուսանքների աղբյուր է, նրա հուզական բարեկեցության պայմանը, հպարտության առարկան:Երբ երեխան լավ է սովորում, նրան գովում են և՛ ծնողները, և՛ ուսուցիչը: Ավելին, դասարանում, որտեղ ուսուցչի դերը ոչ միայն որոշիչ , այլև միակ հեղինակություն վայելող կարծիքն է, որի հետ բոլորը հաշվի են նստում, բարձր գնահատականը ապահովում է համապատասխան կարգավիճակ:

Այսպիսով, կրտսեր դպրոցական տարիքը կյանքի կարևորագույն փուլերից մեկն է, որից է կախված մտածողության և անձնավորության մակարդակը, սովորելու ցանկությունը և կարողությունը, սեփական ուժերի նկատմամբ հավատը: Սոցիալական կարգավիճակի փոփոխության արդյունքում երեխան դուրս է գալիս ընտանիքի սահմաններից՝ ընդլայնելով հաղորդակցման շրջանակը:

Կրտսեր դպրոցականների անհատական առանձնահատկությունները

Հոգեբանությունն ուսումնասիրում է բնավորությունը հնագույն ժամանակներից: Կերպարի մասին դեռ 5-րդ դարում. մ.թ.ա. գրել է Հերոդոտոսը, կերպարների տեսակների արտահայտիչ նկարագրությունները ստեղծել են Արիստոտելը և Թեոֆրաստը: Հին հույներն առաջինն էին, ովքեր փորձեցին բնավորության գիտական սահմանում տալ և վերլուծել, թե ինչպես է ձևավորվում «մարդկային կայուն տրամադրվածությունը»: Դարերի ընթացքում գիտության հետագա զարգացումը ցույց է տվել, որ բնավորության ուսումնասիրությունը կապված է խառնվածքի և անհատականության ուսումնասիրության հետ, և շատ դժվար է տարբերակել այդ հասկացությունները:

Խառնվածքը բնածին է և կազմում է անհատականության հոգեբանական հիմքը: Այն արտահայտվում է մտավոր գործընթացների ուժով, արագությամբ և կայունությամբ: Խառնվածքի առանձնահատկություններից ելնելով որոշում են այն տիրույթը, որի շրջանակներում կզարգանան հոգեկանի ֆորմալ-դինամիկ բնութագրիչները (տեմպ, կայունություն, մտավոր գործընթացների շարժունակություն): Խառնվածքը որոշում է վարքի իմպուլսիվությունն ու գրգռվածությունը, մարդկային փորձառությունների տևողությունը և ուժը:

Խառնվածքի անհատական հատկանիշները լավագույնս նկատվում են մանկության և կրտսեր դպրոցական տարիքում, երբ անհատական կարգավորման համակարգը դեռ չի ձևավորվել, և երեխան չի կարողանում վերահսկել իր գործողությունները: Ըստ այդմ՝ խառնվածքը դրսևորվում է հստակ և ուռուցիկ: Գիտության մեջ խառնվածքի երկարատև ուսումնասիրության օրինակ՝ մանկությունից մինչև հասուն տարիք, եղել է 1966 թվականի Նյու Յորքի հետազոտությունը: Ամերիկացի գիտնականների ժամանակակից աշխատանքները ցույց են տալիս, որ մարդու հոգեֆիզիոլոգիական բնութագրերը խառնվածքի հիմքն են, բայց նրանք կարող են փոփոխվել շրջակա միջավայրի ազդեցության տակ, որտեղ երեխան մեծանում է:

Բացի այդ, մանուկ հասակում խառնվածքի առանձնահատկությունները հնարավորություն են տալիս կանխատեսել, թե ինչպես է երեխան հետագայում հարմարվելու նոր պայմաններին և ինչպես կզարգանան նրա հարաբերությունները հասակակիցների հետ4: Պարզվեց նաև, որ կապ կա երեխայի խառնվածքի և մոր հետ կապվածության որակի միջև:

Այնուամենայնիվ, զարգացման առանձին փուլերում տարբեր գործոնների փոխազդեցությունը հանգեցնում է ոչ միանշանակ արդյունքների: Ուսումնասիրելով, օրինակ, «սոցիալական հեռավորության» երեխաների վարքագիծը, պարզվեց. «Վարքի կարգավորման ֆիզիոլոգիական մեխանիզմների գերակշռության ժամանակաշրջանները փոխարինվում են դրանում սոցիալական գործոնների գերակայությամբ, փոխարինվում է նրանց ներդաշնակ փոխազդեցությունը. միջամտող փոխադարձ ազդեցությամբ»:

Բազմագործունայնությունը դժվարացնում է օրինաչափությունների նույնականացումը և պահանջում է մանրակրկիտ տեսական ուսումնասիրություն՝ կապված երեխաների վարքագծի անհատական հատկանիշների վրա խառնվածքի ազդեցության ուսումնասիրության հետ: Մասնավորապես, երեխայի վաղ սոցիալական մեկուսացման մասին վկայող վարքագիծը վերլուծելիս դժվար է տարբերակել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «զսպվածությունը», «կոշտությունը», «արգելափակումը», «ամաչկոտությունը», «սոցիոմետրիկ մերժումը»: Օգտագործված գիտական գրականության մեջ՝ դրանք ցույց են տալիս ինչպես հոգեբանական, այնպես էլ կենսաբանական բնույթի տարբեր երևույթներ: Բացի այդ, մեր կենցաղային հոգեբանությունը նրանցից ոմանց կապում է ոչ այնքան խառնվածքի, որքան բնավորության հետ:

Բնավորությունը զարգանում է ավելի ուշ, քան խառնվածքը: Նրա դիմագծերը նույնպես բացահայտվում են բավականին վաղ՝ անգամ մանկության տարիներին: Բայց ի տարբերություն խառնվածքի, բնավորությունը ամբողջ կյանքի ձևավորում է: Ֆրանսիացի հոգեբան Ա.Վալոնը գրում է, որ արդեն յոթ ամսականում երեխան, բղավելով մեկ այլ երեխայի վրա, գոհունակ ժպտում է՝ հասնելով գերազանցության7:

Բնավորությունը զարգանում է ուրիշների հետ փոխգործակցության գործընթացում: Դա որոշակի մարդուն բնորոշ վարքագծի համակցություն է, որը կրկնվում է որոշակի կյանքի իրավիճակներում: Այսպիսով, բնավորությունը դրսևորվում է վարքի մեջ, կամ, այլ կերպ ասած, վարքագիծը բնավորության գոյության ձև է: Յուրաքանչյուր վարքագծի հետևում, որը մենք օգտագործել ենք, կա մեր բնավորության որոշակի գիծ: Պատահական չէ, որ նրա մասին խոսելիս նրանք միշտ ընդգծում են բնավորության երկու հիմնական ձև՝ վարքի մեթոդների կամ տեխնիկայի կրկնությունը (ճանաչելով մարդուն, կարելի է նախապես կանխատեսել) և վարքի ինքնատիպությունը, որը տարբերում է մարդու բնավորությունն այլ մարդկանց բնավորությունից:

Ողջ կյանքի ընթացքում մենք աստիճանաբար ընտրում, հղկում և կուտակում ենք այն վարքագիծը, որն օգնում է մեզ հաղթահարել անընդհատ առաջացող տարբեր հանգամանքները: Ուստի յուրաքանչյուր կայուն հատկանիշ, նախքան բնավորության մեջ հենվելը, երեխայի համար սկզբում հայտնվում է նոր իրավիճակում, փորձվում, ապա իրավիճակի հաջող

հանգուցալուծման դեպքում այն սկսում է ակտիվորեն կիրառվել և վերջապես. մտնում է օրինաչափություն՝ որոշակի տեսակի իրավիճակներում վարքի չափանիշ:

Բնավորություն դաստիարակելու ևս մեկ տարբերակ կա՝ նպատակասլաց զարգացնել մարդու ստեղծագործական ունակությունները: Երեխան, ում խրախուսվում է լինել անկախ և ստեղծագործ, կարող է հեշտությամբ փոխել վարքագծային ծրագիրը, ընտրել արդյունավետ վարքագիծ, հաղթահարել խոչընդոտներն ու կարծրատիպերը:

Երկրորդ՝ երեխայի մեջ որոշակի տեսակի վարքագծի հաստատման արտաքին պատճառները ներառում են ընտանեկան նորմերն ու կանոնները, սոցիալական միջավայրի ազդեցությունը, ներառյալ կրթական հաստատությունները, և որպես ամբողջություն հասարակության մշակութային ազդեցությունը: Այս արտաքին հանգամանքները միասին վերցրած, երեխային հնարավորություն են տալիս սովորելու վարքի այն օրինաչափությունները, որոնք դրսևորվում են իրեն շրջապատող մարդկանց կողմից:

Կարող է թվալ, որ ավելի հեշտ է ազդել արտաքին գործոնների վրա, որոնք պայմանավորում են բնավորության առանձնահատկությունների ձևավորումը, քան աշխատել մարդու կարիքների և շարժառիթների հետ: Օրինակ, դրանք ավելի հեշտ է բացահայտել, ուսումնասիրել և վերլուծել: Այնուամենայնիվ, եթե փորձես փոխել երեխայի կյանքի իրական պայմանները, պարզվում է, թե որքան դժվար է: Ինչպե՞ս փոխել ծնողներին կամ ուսուցիչներին աշխարհի վերաբերյալ իրենց հաստատված հայացքներով:

Փորձելով արտաքին պայմաններն ավելի բարենպաստ դարձնել՝ մենք բախվում ենք հարաբերությունների ողջ համակարգի վերակառուցման անհրաժեշտությանը, որում ներառված է երեխան: Խնդիրը բարդ է, ուստի իմաստ ունի հույսը դնել մեծերի վրա, այլ հույս դնել սեփական երեխաների գործունեության վրա, ընդլայնել երեխայի գիտելիքները և սովորեցնել նրան նոր փորձ փոխանցել սեփական «ֆիլտրերի» միջով:

Հատկանշական է, որ բնավորության ձևավորման գործընթացի հենց այս կողմն է ամենաքիչ ուսումնասիրված: Շեշտելով շրջակա միջավայրի արտաքին պայմանները՝ գիտությունը հաճախ անտեսում էր այն հարցը, թե որքան ակտիվ է երեխան, երբ և ինչպես է նա սկսում ընտրել վարքի ձևեր: Բնականաբար, նման ընտրություն կարող է կատարվել ակամա, սակայն որոշակի տարիքում առաջանում է այս կամ այն վարքագիծը: Ըստ Ս.Լ. Ռուբինշտեյնը, «մարդն ինքն է մասնակցում իր բնավորության զարգացմանը և ինքն է գիտակցաբար նախընտրելու ունակությունը, պատասխանատվություն կրում դրա համար»: Սա բնավորության զարգացման հաջորդ փուլն է, երբ այն ոչ միայն ենթարկվում է օբյեկտիվ հանգամանքների ազդեցությանը, այլև վերակառուցվում է կյանքի նպատակներին ու ծրագրերին համապատասխան: Այս դեպքում մարդը հանդես է գալիս որպես սեփական վարքագծին տիրապետող և բնավորություն դաստիարակող մարդ:

Այսպիսով, անձի զարգացումն ունի իր ժամանակագրությունը, իսկ բնավորության զարգացումը՝ իր: Նախ, ավելի վաղ տարիքային փուլերում բնավորությունը հայտնվում է: Այնուհետև, քանի որ բարոյական զարգացումը և աշխարհի, այլ մարդկանց և սեփական անձի

նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը, ավելի ու ավելի պարզ է դառնում մարդու անհատականությունը:

Գործունեությունն ուղղված է տվյալ մարդու համար առաջնորդող և նրա համար անձնական նշանակություն ունեցող շարժառիթներով: Հետևաբար, անհատականության ծնունդը տեղի է ունենում երկու անգամ՝ նախադպրոցական և պատանեկության տարիքում, երբ տեղի է ունենում մոտիվների բախում և ստորադասում: Անհատականությունը իմաստների կառուցվածք է և դրդապատճառների հիերարխիա: Միայն մարդն է կարողանում կառավարել իր բնավորությունը, օգտագործել այն որպես գործիք իր նպատակներին հասնելու համար:

Բնավորության զարգացումը յուրաքանչյուր տարիքային փուլում ունի իր առանձնահատկությունները:

Այսպիսով, կրտսեր դպրցականի մանկության ընթացքում դա որոշվում է այն հնարավորություններով, որոնք ընտանիքը տալիս է երեխային: Կրտսեր դպրոցական տարիքում բնավորության գծերը ձևավորվում են ոչ այնքան ընտանեկան կանոնների ու սովորույթների, որքան սոցիալական նորմերի և ավանդույթների ազդեցության տակ: Դպրոցը որպես պետական հաստատություն առաջ է քաշում պահանջներ, որոնք դիտարկվում են նույնիսկ մոտ մեծահասակների կողմից, ամենազոր՝ երեխայի տեսանկյունից: Ավելին, տարրական դասարաններում ծնողները կրթությունը դիտարկում են որպես սեփական կրթական համակարգի փորձություն:

Նրանք ուշադիր են ուսուցչի գնահատականների և խորհուրդների նկատմամբ և, որպես կանոն, համաձայն են ուսուցչի կարծիքի և առաջարկությունների հետ: Այսինքն՝ զարգացման այս փուլում մեծերը երեխաներից օրինակելի վարք են ակնկալում: Հետևաբար, տարրական դպրոցում կրթության ժամանակը տարիքային շրջան է, որը հատկապես բարենպաստ է հասարակության մեջ ընդունված վարքի ձևերի յուրացման և, համապատասխանաբար, հարմարվողական, ճկուն բնավորության ձևավորման համար:

Հայտնի է, որ ավելի կրտսեր դպրոցականներն առանձնանում են ընկերասիրությամբ (ինչպես մեծահասակների, այնպես էլ իրենց հասակակիցների հետ կապված); շփում (սովորաբար առանց խորը բարեկամության); սոցիալական գործունեություն, որի ընթացքում երեխան ձգտում է մասնակցել դասի աշխատանքներին և կատարել ուսուցչի առաջադրանքները: Բայց այս տարիքի երեխաների սոցիալական նորմերի նկատմամբ հարգանքը դեռևս չունի գիտակցաբար ընտրված բարոյական դիրքորոշում: Օրինակ՝ կրտսեր աշակերտները ենթարկվում են ուսուցչի պահանջներին, առաջին հերթին այն պատճառով, որ նրանց համար ուսուցիչը վարքի կանոններ սահմանող ամենահեղինակավոր մարդն է:

Այսպիսով, կրտսեր դպրոցում երեխայի կառուցողական փոխազդեցության կարողությունը կախված է ընտանիքում ձեռք բերված փորձից և դպրոցական նորմերից, որոնք նա սկսում է սովորել: Կա միայն տնային «պրակտիկա», որը ձեռք է բերվել սիրելիների հետ շփվելիս, և կա վարքի տարբեր ձևերի փորձարկում, որոնց երեխաները ծանոթանում են դպրոցում: Դեռ վաղ է ասել, որ կրտսեր աշակերտի վարքագիծը որոշվում է ինքնուրույն մշակված անձնական իմաստով:

Այնուամենայնիվ, մտնելով տարբեր հարաբերությունների մեջ իրենց կյանքում նոր մարդկանց հետ, երեխաները ոչ միայն պատճենում և վերարտադրում են այն, ինչ տեսնում են, այլ միևնույն ժամանակ ընտրում են այն նմուշները, որոնք տեղավորվում են աշխարհի մասին իրենց գիտելիքների մեջ և «հարմարեցնում» դրանք որոշակի իրավիճակի համար: Այստեղ դրսևորվում է սոցիալական ստեղծագործությունը՝ արտացոլելով երեխայի անհատականությունը, կյանքի մասին նրա ուրույն պատկերացումները: Հետևաբար, նույնիսկ օրինակելի վարքագծի վրա մեծ կենտրոնացում ունենալով, ոչ բոլոր երեխաներն են, որ հատել են դպրոցի շեմը, մոտավորապես այդպես են պահում: Տարրական դասարանների աշակերտների մեջ կան երկչոտ և ամաչկոտ, կռվարար և անհնազանդ, ովքեր, չնայած դպրոցի հզոր ազդեցությանը, պահպանում են իրենց յուրօրինակ հատկանիշները:

Այսպիսով՝ արդյունավետ դասի անցկացման կարևոր պայմանն է ուսուցչի բանվոր խոսքը, կուլտուրան, տակտը, տեխնիկան, վարպետությունը, դասավանդման մեթոդը, որը նպաստում է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելուն, դասին ավելի շատ նրանց մասնակից դարձնելուն, դասապրոցեսը ստեղծագործաբար կազմակերպելուն:

Այս հետազոտական աշխատանքի համար նախատեսված փորձարարական դասերն անց եմ կացրել Սյունիքի մարզի Ճաղաթի միջնակարգ դպրոցում, որտեղ դասավանդում եմ երկրորդ դասարանում:

ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

Առարկայի անվանումը՝ Մաթեմատիկա 6.09.2023

Դասարանը՝ 2-րդ

Դասի թեման՝ Գումարում և հանում 20–ի սահմանում

Դասի տևողությունը՝ 1 դասաժամ

Դասի տիպը՝ Համակցված դաս

Կահավորում՝ Դասագիրք, դիդակտիկ քարտեր, պաստառներ

Կիրառված մեթոդը՝ ԽԻԿ համակարգ

Նպատակը՝ Զարգացնել 20–ի սահմանում գումարում և հանում գործողությունները կատարելու հմտություններ: Ձևավորել տրամաբանական եզրակացություններ անելու հմտություններ: Խնդիրների լուծման հմտությունների ձևավորումը:

Ընթացքը՝ Բանավոր հաշվից հետո, սովորեցրն գումարման և հանման գործողության բաղադրիչները: Որից հետո կատրեցինք դասագիքում տրված առաջադրանքները:

Տրված թվերով կազմեցին չորս հավասարություն: Անվանեցին հավասարության բաղադրիչները:

14, 8 , 6 20, 12, 8 16 , 7, 9 15, 9, 6

Հարցերի միջոցով ամրապնդեցինք հավասարության բաղադրիչները:

Օրինակ՝ Ո՞ր դեպքում է 15–ը գումար, իսկ ո՞ր դեպքում՝ նվազելի:

Հաշվեցին արտահայտության արժեքը:

12+7= 4+14= 9- 5=

7+12= 14+6= 19-7=

Լրացրեցին պնդումները

Լրացրնել նախադասությունները՝ օգտագործելով գումար, գումարելի, նվազելի, հանելի, տարբերություն բառերը:

Կազմեցին հավասարություններ՝ աղյուսակներում պակաս տվյալները լրացնելու համար:

7 + 8 արտահայտության մեջ 7 և 8 թվերը ... են:

16 – 9 արտահայտության մեջ 16–ը ... է, իսկ 9–ը՝ հանելին:

50 – 30 = 20 հավասարության մեջ 50–ը նվազելին է, իսկ 30–ը՝ ...:

12 և 5 թվերի ... 17 է, իսկ ... 7 է:

Հավասարության բաղադրիչների իմացությունը ամրապնդելու համար կազմեցինք հավասարություններ տրված բաղադրիցիներով:

գումարելի 12 նվազելի 20

գումարելի 6 հանելի 7

գումար 18 տարբերություն 3

10 Աղյուսակում տվյալներ են Սոնայի, Աննայի ու Գրետայի ուլունքների քանակների մասին:

Քանի՞ ուլունք ունի աղջիկներից յուրաքանչյուրը: Ընտրել ճիշտ պնդումը.

Պատասխանի ստուգում

ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

Դասարանը՝ 2-րդ

Ամիս ամսաթիվ՝ 29.09.2023թ.

Դասի տևողությունը՝ 3 դասաժամ

Առարկան՝ մայրենի

Ուսուցիչը՝ Մերի Գասպարյան

Դասի թեման՝ << Ով ենք մենք>>

Դասը՝ Ընկերները

Դասի տիպը՝ Համակցված դաս

Կիրառված մեթոդները՝

Խթանման փուլում՝ Մտագրուհի

Իմաստի ընկալման փուլում՝ Ամրապնդող զրույց

Կշռադատման փուլում՝ Տեքստի բովանդակության վերլուծություն:

Տնային հանձնարարություն

Դասի նպատակները՝ Ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները , զարգացնել կամային որակներ, բանավոր խոսքը, հարստացնել բառապաշարը:

Դասի վաեջնարդյունքը՝ Ընթերցի տեքստը, խոսի ընթերցածի բովանդակության մասին: Մտքերն արտահայտի պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային. լսի հրահանգեր, իրեն ուղղված խոսքը և արձագանքի:

Խաչվող հասկացություններ՝

Անհատ և հարաբերություններ. Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, պարտականությունների ստանձնում և իրավունքների իրացում:

Պատճառ և հետևանք. Պատճառահետևանքային կապերը կյանքում, բնության մեջ, ուսումնասիրվող գրական և ոչ գրական տեքստերում:

Դասի կահավորումը և անհրաժեշտ նյութեր՝ Դասագիրք, քարտեր, տեսադաս

Դասի ընթացքը.Դասի գլխագիրը կարդացինք, յուրաքանչյուր կետ քննարկվեց և կատարվեց է եզրակացություն:

Առաջին կետը վերաբերում էր Ե-ի ուղղագրությանը:

Երկրորդին իմացանք, թե ինչպես Նարեկի չսիրած գորվածը դարձավ սիրելի:

Երրորդին՝երեղաները գնահատեցին ընկերոջ դերը դժվարություններ հաղթահարելու գործում:

Չորրորդում տեսնենք, թե ինչպես փոքրիկ մուկը դարձավ մի մեծ փիղ:

Այնուհետև մուտքի պատուհանիկներն լրացրեցինք, ՝ խաղ. << Սիրում եմ - Չեմ սիրում>>:

Յուրաքանչյուրն արտահայտեց իր կարցիքը, քննարկեցինք և անցանք տեքստի շուրջ աշղատանքին:

Առաջին մասը բարձրաձայն ընթերցելուց հետո երեխաները պատասխանեցին բավանդակությանընկալման նպաստող հարցերին:

Ովքե՞ր էին պատմվածքի հերոսները:

Ի՞նչ խաղ էին ուզում խաղալ:

Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս կարելի է մու-կից փիղ ստանալ:

Որից հետո շարունակեցինք ընթերցանությունը:

Երկրորդ մասն ընթերցելու ընթացքում երեխաները հերթով մոտեցան գրատաղտակին, առաջին աշակերտը գրեց մուկ բառը, յուրաքանչյուր հաջորդը փոխելով մեկ տառ, ստացան փիղ:

Երեխաները ցուցաբերեցին մեծ ակտիվություն: Որն էլ նպաստեց նյութի ըկալմանը դարձնելով ավելի դյուրին և հետաքրքիր:

Մուկ → մուր → հոր → հող → փող → փիղ

Տեքստի բովանդակության շուրջ կատարվեցիք վերլուծություններ և եզրահանգումներ հարցերի միջոցով:

Կատարեցրնք գրավոր աշխատանքներ գրատաղտակին:

Կարդացինք Ե-ի երգը և դիտեցինք տեսահոլովակը, ուշադրություն դարձնելով ե-ի հնչողությանը, կազմեցինք աղյուսակ, մի սյունյակում գրեցինք բառեր որտեղ ե-ն հնչում է յէ, մյուսում՝ ե-ն հնչում է է:

Տնային հանձնարարություն. Հարցրո՛ւ ընկերոջդ, թե որ գործերը նա կարող է խաղով անել.

դաս սովորել

կարգի բերել սենյակը

գիրք կարդալ

հագուստ դասավորել

ԴԱՍԻ ՊԼԱՆ 3

Ուսուցիչ՝ Մեչի Գասպարյան

Դասարանը՝ 2-րդ

Ամիս, ամսաթիվ՝ 6.10.2013թ.

Տևողությունը՝ 45 րոպե

Առարկան՝ Մաթեմատիկա

Դասի տիպը՝ Համակցված դաս

Կահավորում՝ Դասագիրք, դիդակտիկ քարտեր, պաստառներ

Կիրառված մեթոդը՝ ԽԻԿ համակարգ

Քայլ 1. Ընտրել թեման՝ Անհայտ հանելին գտնելը

Քայլ 2. Հրահանգներ տալուց առաջ հստակեցնել նպատակները և միջոցները

Ակադեմիական նպատակները՝ Երկնիշ թվերի հետ գումարման և հանման գործողություններ կատարելու հմտությունների ձևավորումը և զարգացումը:

Վերջնարդյունքները՝ Գտնի թվաբանական գործողությունների անհայտ բաղադրիչները: Լուծի մեկ գործողությամբ խնդիրներ՝ կիրառելով տարբեր թվաբանական գործողություններ /…-ով ավելի/պակաս ընդամենը և այլն/:

Խաչվող հասկացություններ՝

Միջառարկայական կապը՝ Մայրենի: Կարողանա մտքերը հստակ և գրագետ ձևակերպել: Հասկանալով կարդալ առաջադրանքներն ու տեղեկատվությունը, պատասխանել կարդացածի վերաբերյալ հարցերին: Լսել ու հասկանալ տեղեկատվությունը, հրահանգները, ձևակերպել

հարցեր լսածի, տեսածի և կարդացածի վերաբերյալ: Կարողանալ կապակցված խոսքի միջոցով մեկնաբանել և հիմնավորել կատարված քայլերը:

Հմտությունների զարգացման նպատակները՝ Կարողանան անհայտ հանելին գտնեն

Սենյակի կահավորումը՝ Դասագիրք, թեմատիկ պաստառ

Քայլ 3. Բացատրել առաջադրանքը և համագործակցության նպատակը

Առաջադրանքը՝ Սովորեցինք, որ անհայտ հանելին կստանաս, եթե նվազելիից հանես տարբերությունը:

6 – = =7, 16-7=9

Կատարեցինք առայադրանքներ անհայտ հանելին գտնելու վերաբերյալ, լուծեցինք ղնդիրներ ամրապնդելով դասը:

Տնային հանձնաարարության՝ Առ. 151.Գտնել անհայտ բաղադրիչը

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ բացահայտել ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման արդյունավետությունը կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացում:

Դասը սովորողների կողմից նոր նյութի յուրացումն է, որին տրամադրվում է դասաժամի մեծ մասը: Դասի ընթացքում կարող են գործածվել այնպիսի եղանակներ, ինչպիսիք են խաղը, բացատրությունները, առանձին հարցերի շուրջ զրույցները, քննարկումները, ինքնուրույն աշխատանքները և այլն: Ուսուցիչը նախքան նյութի հաղորդումը պետք է ակտիվացնի սովորողների ուշադրությունը, մտավոր գործունեությունը, կազմակերպի ու համակարգի ստացվող գիտելիքները:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական , գիտամանկավարժական և գիտամեթոդական գրականությունը,
- Ներկայացնել կրտսեր պրոցականի աշխատանքին նախապատրաստվելու կարևորությունը, այդ աշխատանքի բովանդակությունը , գրանցել արդյունքները
- Ներկայացնել ուսուցչի աշխատանքի բովանդակությունը վերը նշված նպատակին հասնելու համար
- Ներկայացնել մեթոդների համալիր և դրանց կիրառման արդյունքը

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Յ. Կ. Բաբանսկի <<Մանկավարժություն>>, Երևան, 1987

Բալյան Ա.Ա §Մանկավարժական հոգեբանության հարցեր՝ - Երևան: Լույս, 1983

Թոֆլեր Է., §Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ՝ Երևան, 2006 թ., էջ 26:

Аромштам М. “Дети смотрят мультфильмы: психолого-педагогические заметки. Практика производства мультфильма в детском саду.” — Москва: Чистые пруды, 2006. — 30 с.: — Библиотечка «Первого сентября». Серия «Дошкольное образование»; вып.

Веккьо Ж. “Киндерсюрприз» для маркетологов: Как создать «долгоиграющий» бренд для детей.” М.: Фаир-Пресс, 2005. 256 с.

Мухина В. “Возрастная психология. Феноменология развития”10-е изд., перераб. И доп. – М.:2006.- 608 с